ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Անհրաժեշտությունը***՝ <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակի մեղմելու/ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

2. ***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***՝ <<Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք)՝ ամրագրված է լճից ջրի առավելագույն չափաքանակ 170 մլն մ^3: Ձրբացթողումներն իրականացվում են ՀՀ կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

2016 թվականի նորմալ ջրատվության տարվա համեմատ, ինչպես 2017 թվականը (Սևանա լճից բաց է թողնվել 266.757 մլն մ^3 ջուր), այնպես էլ 2018 թվականը դիտվել է սակավ ջրատվության տարիներ: 2018 թվականի հունիսի 15-ի դրությամբ, 2016 թվականի՝ որպես նորմալ ջրատվության տարվա նույն օրվա համեմատ, ջրամբարներում առկա ջրի դեֆիցիտը կազմել է 155 մլն մ^3, իսկ Սևան-Հրազդան ոռոգման համակարգը սնող Ապարանի, Ազատի և Մարմարիկի ջրամբարներում՝ 35 մլն մ^3: Անխուսափելի է նաև ջրի դեֆիցիտ Սևան-Հրազդան համակարգը սնող Հրազդան գետի ջրատվությունում հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Սևան-Հրազդան համակարգի իշխման տակ գտնվող 39 հազ հա հողատարածքների ջրապահովվածության հաշվարկներում նախատեսվել է Հրազդան գետի ջրատվությունն ամբողջ ոռոգման ժամանակահատվածում 165 մլն մ^3 (ինչպես 2016 թվականին), որից հուլիս-սեպտեմբեր ամիսներին՝ 110 մլն մ^3, սակայն գետերի բազմամյա ջրագրության տվյալների համաձայն սակավաջուր տարում այդ

ամիսների Հրազդան գետի հոսքը կազմում է 5.8 մ/վրկ՝ 55-60 մլն մ^3 առանձին տարիների՝ շուրջ 70 մլն մ^3, նախատեսվածից 40-45 մլն մ^3 պակաս: Այսպիսով, 2018 թվականին համակարգի ոռոգման ջրի դիֆիցիտը 2016 թվականի համեմատ կկազմի շուրջ 40 մլն մ^3՝ Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանները լրացուցիչ ծանրաբեռնվածությամբ շահագործելու պարագայում:

Սևանա լճից հունիսի 15-ի դրությամբ 2016 թվականին բաց է թողնվել 8.978 մլն մ^3, 2017 թվականին՝ 52.231 մլն մ^3 և 2018 թվականին՝ 27.268 մլն մ^3 ջուր, իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել համապատասխանաբար 2016 թվականին 94.341 մլն մ^3, 2017 թվականին 87.876 մլն մ^3 և 2018 թվականին 111.121 մլն մ^3 ջուր:

3. ***Կարգավորման*** **նպատակը և բնույթը՝**

Անհրաժեշտ է փոխել օրենքով սահմանված ոռոգման նպատակով լճից 2018 թվականի բացթողման 170 մլն մ^3 չափաքանակը՝ այն դարձնելով մինչև 210 մլն մ^3:

4. ***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները՝*** ներկայացված որոշման նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի աշխատակազմի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության և ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից:

5. ***Ակնկալվող արդյունքները՝***

Հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում և ջրապահովվածության բարձրացում: